

Միացյալ Նահանգներ-Իրան հարաբերությունների ներկա փուլը

Միացյալ Նահանգներ-Իրան հարաբերությունների վերաբերյալ վերջին շրջանում ստացվող ազդակները (միջազգային մամուլում հրապարակվող տեղեկատվություն, միջազգային հետազոտական կենտրոնների զեկույցներ, ֆաղափական գործիչների և դիվանագետների հայտարարություններ, զրույցներ դիվանագետների և վերլուծաբանների հետ) զգալիորեն տարբերվում են նախորդ շրջանի ընթացքում ստացված ազդակներից:

Նախ՝ այդ ազդակները համեմատաբար շատ ավելի փչ են, չնայած որ տեղի են ունեցել բազմաթիվ կարևոր իրադարձություններ. Բաղդադում համարյա 30-ամյա ընդմիջումից հետո կայացել են ամերիկա-իրանական պաշտոնական բանակցություններ դեսպանների մակարդակով, տեղի են ունեցել Սոլամա-Լարիջանի բանակցությունները, անց են կացվել Միջուկային էներգիայի միջազգային գործակալության ղեկավարության և Իրանի ներկայացուցիչների ֆննարկումների հերթական հանդիպումները, Իրանի դիվանագետները և փորձագետները բանակցել են ռուսական կողմի հետ՝ Բուշերի ատոմակայանի վերաբերյալ: Եվ, վերջապես, ԱՄՆ նախագահ Զ.Բուշը և ՌԳ նախագահ Վ.Պուտինն իրենց բանակցությունների ընթացքում անդրադարձել են նաև Իրանին առնչվող խնդիրներին:

Բացի այդ, տարբեր է նաև նշված ազդակների տոնայնությունը: Դրանց մի մասը բավականին լավատեսական է, որը վստահեցնում է, որ հարցերն արդեն սկսել են լրջորեն ֆննարկվել, կողմերը հակված են իրար լսելու: Հասկանալի պատճառներով բանակցային գործընթացն ընթանում է շատ բարդ, սակայն արդեն իսկ ձեռք են բերվել որոշ պայմանավորվածություններ Իրանում և Աֆղանստանում երկու պետությունների գործողությունների վերաբերյալ:

Հույս է հայտնվում, որ Իրանի միջուկային ծրագրերի վերաբերյալ նույնպես բավականին լուրջ ֆննարկումներ են ընթանում, որոնց տրամաբանությունն է՝ ձևավորել հնարավոր փոխզիջումների դաշտ և փոխադարձ վստահության մթոլորտ:

Մյուս կողմից, ամերիկյան Արտաֆին հարաբերությունների խորհրդի և բրիտանական Սոցիալական հետազոտությունների թագավորական ինստիտուտի հրապարակումներում նշվում է, որ Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցներն արդեն իսկ բավականին լուրջ կերպով ազդել են երկրի տնտեսական վիճակի վրա և զազի ու բենզինի նորմավորման ծրագիրը մեծ դժգոհություն է առաջացրել իրանական հասարակության մեջ: Յուցարարները նույնիսկ վանկարկել են. «Մահ Ահմադինեշադին»: Ըստ այդ հրապարակումների տվյալների, Իրանում դրամի արժեզրկումն աշխատազրկությունը հասցրել է համարյա 30 տոկոսի:

Լոնդոնյան «Էկոնոմիստը» նշում է, որ միջազգային բանկերի նկատմամբ Միացյալ Նահանգների ֆինանսների նախարարության նմշման հետևանքով Իրանի ֆինանսական ոլորտին հսկայական վնաս է հասցվել:

Միացյալ Ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1737 և 1747 որոշումներով գործի դրված պատժամիջոցներն ուղղված են Իրանի ուրանի հարստացման ծրագրի կասեցմանը, որը, ինչպես վստահեցնում են ամերիկյան փորձագետները, վերջին ֆայլն է միջուկային զենք ձեռք բերելու ուղղությամբ:

Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի ֆաղափականության ինստիտուտի վերլուծաբան Մեթյու Լևիտը հայտնում է այն միտքը, որ այս երկու որոշումների ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից ընդունումը «ստիպեց երկրի պրոֆեսիոնալների դասին պատկանող անձանց, որոնք հպարտ էին Իրանի միջազգային համակարգին ինտեգրվելով, սաստիկ ցավ զգալ դիվանագիտական և տնտեսական մեկուսացման պատճառով» (*Wall Street Journal Europe*):

Վաշինգտոնում ներկայումս ֆննարկում են հետագա պատժամիջոցների ծրագրերը: Միաժամանակ դեմոկրատական կուսակցությունից նախագահական պաշտոնի համար պայքարող որոշ թեկնածուներ պնդում են, որ Միացյալ Նահանգները պետք է Իրանի հետ առանց նախապայմանների բանակցություններ վարի և, որ Իրանի միջազգային համակարգի մեջ ներգրավման մերժումը կոնտրպրոդուկտիվ է (Բիլ Ռիչարդսոն): Հանրապետականները, հակառակը, առաջարկում են շարունակել «նմշման ֆաղափականությունը», սակայն, հաշվի առնելով այն, որ Կոնգրեսում և Սենատում դեմոկրատները մեծամասնություն են կազմում, կարելի է ենթադրել, որ նրանք թույլ չեն տա Իրանի հետ կապված շատ խիստ օրենքներ ընդունել:

Ամերիկյան ներկայիս վարչակազմի նպատակը կարճ ձևակերպել է Մայք Զեկոբսոնը. «Զրոյական արտաֆին ներդրում Իրանի տնտեսության մեջ»: Վերլուծաբանները նշում են, որ այդ նպատակն անիրագործելի է, քանի որ Ռուսաստանը և Չինաստանը, ինչպես նաև եվրոպական երկրներից մի քանիսը չեն համաձայնվի այս մոտեցման հետ:

Այս մտայնության արտահայտողը օրերս դարձավ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը, որը «Ազատություն» ռադիոկայանին տված իր հարցազրույցում նշեց, որ ինքը չի բացառում ռազմական միջոցների կիրառումն այն դեպքում, եթե Իրանը չհրաժարվի միջուկային զենք արտադրելու իր ծրագրերի իրականացումից:

Այս ամենը տեղի է ունեցել արդեն Մենում Զ.Բուշ ավագի ներկայությամբ նախագահներ Զ.Բուշ-Վ.Պուտին բանակցություններից հետո: Բանակցությունների արդյունքում ընդունվեց մի փաստաթուղթ, որը բնութագրվեց որպես ընդհանուր ուղերձ Իրանին: Փաստաթղթում նշվում է, որ Միացյալ Նահանգները և Ռուսաստանի դաշնությունը նույն կերպ են պատկերացնում միջուկային էներգիայի օգտագործման հետ կապված խնդիրների լուծումն՝ այն կհանգեցնի «էլեկտրաէներգիայի

արտադրության ավելացմանը, տնտեսական անին և զարգացմանը, կնվազեցնի կախվածությունը ածխաջրածնային վառելանյութից, ինչը կհանգեցնի շրջակա մթնոլորտի աղտոտման նվազեցմանը և ջերմոցային գազերի արտանետման նվազեցմանը»:

Կողմերը նշել են, որ պատրաստ են օժանդակել միջուկային էներգիայի օգտագործմանն այն ուղղություններով, որոնք կնվազեցնեն միջուկային զենքի տարածման վտանգը, սակայն միաժամանակ հնարավորություն կտան միջուկային տեխնոլոգիաներ շունեցող երկրներին օգտվել միջուկային էներգիայի ընձեռած հնարավորություններից: Միացյալ Նահանգները և Ռուսաստանը համաձայնել են իրենց ջանքերն ուղղել «աջակցելու, ամրապնդելու և լրացնելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գործունեությունը, մասնավորապես՝ աջակցել այս կազմակերպության առաջարկած իննտվացիոն միջուկային ռեակտորների և վառելանյութային ցիկլերի ստեղծման միջազգային ծրագրին, ինչպես նաև օժանդակել ՌԴ նախաձեռնությանը՝ իր տարածքում Միջուկային վառելիքային կենտրոնի ստեղծմանը, ԱՄՆ նախաձեռնությանը՝ Գլոբալ միջուկային էներգետիկ գործընկերության ձևավորման ուղղությամբ:

Փաստաթուղթն արտահայտում է երկու պետությունների՝ միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման ոլորտը բոլոր պետությունների համար բաց դարձնելու ուղղությամբ հնարավոր ֆայլերի իրականացման ձգտումը: Միաժամանակ հստակ արտահայտվում է երկու մեծ տերությունների հաստատակամությունը՝ թույլ չտալ միջուկային զենքի հետագա տարածումը:

Երկու նախագահների ստորագրած այս փաստաթուղթը լուրջ ուղերձ է, որը միաժամանակ շատ լուրջ պարտավորությունների տակ է դնում Միացյալ Նահանգներին և Ռուսաստանին:

Այս ամենը, մեր տեսակետից, նշանակում է, որ տարբեր բանակցող կողմերի միջև և տարբեր հարթություններում անընդհատ և ակտիվորեն իրականացվում են բարդ բանակցություններ, որոնց արդյունքները դեռևս չեն երևում, սակայն որոշակի պայմանավորվածություններ արդեն իսկ կան:

Միացյալ Նահանգները շարունակում է մի կողմից՝ մկաններ խաղացնելու, մյուս կողմից՝ բանակցությունների պատրաստակամություն դրսևորելու ֆաղափակությունը:

Սակայն հարկ է նշել, որ պաշտոնական հայտարարությունների մակարդակով նրանք Իրանի հետ որևէ այլ բանակցությունների մասին, բացի Բաղդադում տեղի ունեցածի (որոշ ակնարկներով՝ նաև ներկայումս փորձագետների մակարդակով շարունակվող) չեն նշել: Հակառակը, Սպիտակ տան ներկայացուցիչը հայտարարել է, որ «դեռևս ակնհայտ չէ, որ Իրանը պատրաստ է ստեղծելու իր ուրանի հարստացման ծրագիրը և ենթարկվելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության պահանջներին: Միացյալ Նահանգներն Իրանի հետ չեն վերսկսի իրենց ֆննարկումները, քանի դեռ համոզված չեն, որ իրանական կողմը կասեցրել է իր՝ միջուկային զենք ձեռք բերելու գաղտնի ծրագիրը»:

Հայաստանի համար ԱՄՆ-Իրան հարաբերությունների լարվածությունն աղետալի է բազմաթիվ պատճառներով, որոնք, թերևս, հարկ չկա նշելու: Այդ իսկ պատճառով մեր պետությունը և հասարակությունը, օգտվելով այն վստահությունից, որը թե՛ Միացյալ Նահանգները և թե՛ Իրանն ունեն մեր նկատմամբ, պետք է օգտագործեն բոլոր հնարավորությունները՝ լարվածությունը նվազեցնելու և ռազմական գործողությունները բացառելու նպատակով: Մենք պետք է կազմակերպենք այնպիսի միջոցառումներ, որոնց ընթացքում Իրանի և Միացյալ Նահանգների պետության և հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչներ հնարավորություն ունենան ֆննսրկելու իրենց խնդիրները: Միջոցառումները պետք է կազմակերպվեն նաև մեր լոբբիստական կազմակերպությունների կողմից: Այս ընդհանուր գաղափարը յուրաքանչյուր դեպքում պետք է համապատասխան ձևակերպում և ձևավորում ստանա: